ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ **ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

10 ՄԱՐՏԻ 2025թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 18 անդամներ:

Բացակա էին՝ Ալիկ Մարտիրոսյանը, Ռուզաննա Պողոսյանը, Լավրիկ Արեվշատյանը, Արմեն Կոստանյանը, Էդգար Վարդանյանը, Օհան Օհանյանը, Սամվել Զաքոյանը, Վալտեր Գեվորգյանը, Միքայել Միքայելյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**
Գրիգոր Բոշյան, Մուրադ Մովսիսյան, Ալվարդ Մանուկյան, Անի Պողոսյան, Լիլիթ Բաբինյան, Արծրուն Ղուրշուդյան, Հասմիկ Եսայան, Տիգրան Զախարյան, Տիգրան Բրսիկյան, Դավիթ Մազմանյան, Ռուբեն Կոխպեցյան, Վարսենիկ Խաչատրյան

**Նիստը վարում էր Գավառ համայնքի ղեկավար՝ Գուրգեն Մարտիրոսյանը**

**Նիստը արձանագրում էր Գավառի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Կարինե Մանուկյանը**

**ԼՍԵՑԻՆ**

***ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ առաջարկվում է.

Հաստատել Գավառ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրակարգը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 44-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲՐՍԻԿՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով՝ առաջարկվում է.

1. Հաստատել Գավառ համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի /կցվում է/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-5

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 45-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 346-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՍԱՐՈՒԽԱՆԻ ԼԱՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲՐՍԻԿՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, առաջարկվում է

1. «Գավառի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների 2025 թվականի թվաքանակների, հաստիքացուցակների, կառուցվածքների և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին» Գավառ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 346-Ա որոշման հավելվածով հաստատված «Սարուխանի Լաուրա մանուկյանի անվան թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի թվաքանակները, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը շարադրել նոր խմբագրությամբ.

*«ՍԱՐՈՒԽԱՆԻ ԼԱՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ*

| N | ՊԱՇՏՈՆԸ | ԴՐՈՒՅՔԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 170000 |
| 2 | ՀԱՇՎԱՊԱՀ | 0.75 | 1 | 130000 |
| 3 | ՄԵԹՈԴԻՍՏ ՈՒՍ. ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ | 0.5 | 1 | 120000 |
| 4 | ԴԱՍՏԻԱՐԱԿ | 2.24 | 2 | 110000 |
| 5 | ԲՈՒԺՔՈՒՅՐ | 1 | 1 | 110000 |
| 6 | ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ | 0.5 | 1 | 110000 |
| 7 | ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՕԳՆԱԿԱՆ | 2 | 2 | 105000 |
| 8 | ԽՈՀԱՐԱՐ | 1 | 1 | 105000 |
| 9 | ԽՈՀԱՐԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ | 1 | 1 | 105000 |
| 10 | ՊԱՀԱԿ | 1 | 1 | 105000 |
| 11 | ՀԱՎԱՔԱՐԱՐ /ԼՎԱՑԱՐԱՐ | 0.75 | 1 | 105000 |
| 12 | ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀՐԱՀԱՆԳԻՉ | 0.5 | 1 | 110000 |
| 13 | ՏՆՏԵՍՎԱՐ | 0.75 | 1 | 105000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 12.99 | 15 | |

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 46-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲՐՍԻԿՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի պահանջներով, առաջարկվում է՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 2-Ն որոշման 2, 3 և 6 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածներիի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 47-Ն)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲՐՍԻԿՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ կետի և 245-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով, Գավառ համայնքի ավագանու 12.04.2024թ. թիվ 107-Ա որոշմամբ հաստատված կարգով՝ առաջարկվում է.

1.Շարժական և անշարժ գույքերի գույքահարկերի գծով առաջացած տույժերը ըստ ներկայացված ցուցակների փոխհատուցել Գավառ համայնքի 2025 թվականի համայնքի բյուջեի միջոցների հաշվին, քանի որ ցուցակներում ընդգրկված անձինք համայնքի բյուջե վճարել են իրենց սեփականություն համարվող գույքերի հարկերը առանց տույժ-տուգանքների.

Ներկայացվում են ցուցակները ըստ բնակավայրերի.

***1. Գավառ քաղաք***

| | |
|---|---|
| ա.հողի հարկի գծով տույժ՝ | 584 364 ՀՀ դրամ |
| բ. շենք-շինությունների գծով գույքահարկի տույժ՝ | 129 181 ՀՀ դրամ |
| գ. փոխադրամիջոցների գծով գույքահարկի տույժ՝ | 386 732 ՀՀ դրամ |
| Ընդամենը՝ | 1 108 181 ՀՀ դրամ |

***2.Նորատուս բնակավայր***

ա.հողի հարկի գծովտույժ՝ 78 315 ՀՀ դրամ
բ.փոխադրամիջոցների գծով
գույքահարկի տույժ՝ 44 621 ՀՀ դրամ
Ընդամենը՝ 122 936 ՀՀ դրամ

***3. Գեղարքունիք բնակավայր***

ա.հողի հարկի գծով տույժ՝ 39 666 ՀՀ դրամ
Ընդամենը՝ 39 666 ՀՀ դրամ

***4. Լճափ բնակավայր***

ա.հողի հարկի գծովտույժ՝ 64 291 ՀՀ դրամ
Ընդամենը՝ 64 291 ՀՀ դրամ

Ըստ բնակավայրերի ներկայացված ցուցակների տույժերի գծով տալ արտոնություն և արտոնությանընդհանուր գումարը՝ 1 335 074 (մեկ միլիոն երեք հարյուր երեսունհինգ հազար յոթանասունչորս) ՀՀ դրամ փոխհատուցել Գավառհամայնքի 2025 թվականի բյուջեով այդ նպատակով նախատեսված 1.6.1. (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) գործառնական դասակարգման 4823 (հարկեր և տուրքեր) տնտեսագիտական հոդվածով նախատեսված միջոցների հաշվին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 48-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆՈՐ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԱՄԵՆԱՄՅԱ ՊԱՐՏԱԴԻՐ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑԱՆԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԼԻԼԻԹ ԲԱԲԻՆՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով՝ առաջարկվում է.

1. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող նոր ձեռք բերված գույքը ներառել ամենամյա պարտադիր գույքագրման ցանկում /հավելված 1/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 49-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(ԶԵԿ. ՀԱԿՈԲ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետով՝ առաջարկվում է.

1. Հաստատել Գավառ համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 50)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆ¬ՍԱՎՈՐՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(ԶԵԿ. ՀԱԿՈԲ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով

1. Համաձայնություն տալ մասնակցելու Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին:
2. Համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Գավառ համայնքի 2025 թ. բյուջեից կատարել համապատասխան համաներդրում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 51)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 18.05.2006 թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման դրույթներով՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաք, Ա. Ոսկանյան փողոց 6/12 ավտոտնակ հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0294-0048 կադաստրային ծածկագրով, 0,00365 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը և Մայրանուշ Սպարտակի Ավագյանի կողմից կառուցված 73 քմ արտաքին (66,81 քմ ներքին) մակերեսով ավտոտնակը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու ինքնակամ կառոյցն իրականացրած անձին:
2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1 քմ-ի համար 1221 (մեկ հազար երկու հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ, իսկ ավտոտնակի 1 քմ-ի համար 1209 (մեկ հազար երկու հարյուր ինը) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 52-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 18.05.2006 թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման դրույթներով՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաք, Ազատության փողոց 2-րդ փակուղի 57 ավտոտնակ հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0294-0284 կադաստրային ծածկագրով, 0,0029 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը և Զահիդա Ալփիանի Շահինյանի կողմից կառուցված 38 քմ արտաքին (34,3 քմ ներքին) մակերեսով ավտոտնակը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու ինքնակամ կառոյցն իրականացրած անձին:
2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1 քմ-ի համար 1221 (մեկ հազար երկու հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ, իսկ ավտոտնակի 1 քմ-ի համար 1209 (մեկ հազար երկու հարյուր ինը) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 53-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)***

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների դրույթներով՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաք Լևիկ Հարությունյան փողոց 4/5 հողամաս հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0390-0038 կադաստրային ծածկագրով, 0,003 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության սահմանափակումներ չունեցող հողատարածքը՝ ավտոտնակ կառուցելու նպատակով, աճուրդային կարգով օտարելուն:
2. 05-001-0390-0038 կադաստրային ծածկագրով 0,003 հա մակերեսով հողատարածքի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը մեկ քառակուսի մետրի համար սահմանել 1500 (մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 54-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

**ԼՍԵՑԻՆ**

***ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՓՈԽՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(ՁԵԿ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)***

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N609-Ն ու 2010 թվականի N208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշման և ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 18.12.2024 թ. տրամադրված N2/փ-517 դրական եզրակացության պահանջներով, ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների դրույթներով՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ Գավառ համայնքին սեփականության իրավունքով պատկանող Գավառ համայնքի Լանջաղբյուր բնակավայրի Գրիգոր Լուսավորչի փողոց թիվ 20/2 հասցեում գտնվող 05-038-0059-0125 կադաստրային ծածկագրով 0.02 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության հողատեսքից փոխել էներգետիկյաի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողամասի:
2. Հողամասի գործառնական նշանակությունը այլ հողեր գործառնական նշանակության հողատեսքից փոխել կապի հողեր գործառնական նշանակության հողատեսքի:
3. Օրենքով սահմանված կարգով նշված փոփոխությունը արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և համայնքի գլխավոր հատակագծում ապահովել սույն որոշումից բխող փոփոխությունները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել հողամասի օտարման գործընթացը:
4. Գավառ համայնքի Լանջաղբյուր բնակավայրի Գրիգոր Լուսավորչի փողոց 20/2 հողամաս հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-038-0059-0125 կադաստրային ծածկագրով, 0.02 հա մակերեսով, էներգետիկյաի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, կապի հողեր գործառնական նշանակության սահմանափակումներ չունեցող հողատարածքը բջջային կապի ալեհավաք կառուցելու նպատակով,

աճուրդային կարգով օտարելուն:
5. 05-038-0059-0125 կադաստրային ծածկագրով, 0.02 հա մակերեսով հողատարածքի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը մեկ քառակուսի մետրի համար սահմանել 2000 /մեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 55-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԾՈՎԱԶԱՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՌԵՍՏՈՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ***

***(ԶԵԿ. ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով և հիմք ընդունելով 17.01.2025թ. Գավառի համայնքապետարանում կայացած հանրային լսման արձանագրությունը՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ Ծովազարդ բնակավայրում արդյունաբերական շինությունը ռեստորանային համալիրի վերակառուցման աշխատանքներին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 56-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(ԶԵԿ. ՌՈՒԲԵՆ ԿՈԽՊԵՑՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով՝ առաջարկվում է.

1. Հաստատել՝

1) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 57-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ (ԱՄԵՆԱՄՅԱ) ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(ԶԵԿ. ԱՐԾՐՈՒՆ ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով՝ առաջարկվում է.

Հաստատել՝

1. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2025 թվականի (ամենամյա) ծրագիրը (հավելված 1):
Սույն նախագծով կարգավորվելու են 2025 թվականի ընթացքում՝ հողերի նպատակային և ծրագրային կառավարման հետ կապված հարաբերությունները, ներառյալ՝ գույքագրման, հաշվառման, գնահատման, համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքների կազմակերպման, հողերի պահպանվածության ապահովման ու կառավարման նկատմամբ վերահսկողության իրականացման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման և բյուջետային քաղաքականության ուղղություններով սահմանված խնդիրները: Նախագիծը նպատակաուղղված է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման և համայնքի հողային պաշարների կառավարման՝ տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում համայնքային միասնական քաղաքականության սահմանման, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման և համայնքի 2022 – 2026 թթ. հնգամյա զարգացման ծրագրով սահմանված խնդիրների լուծմանը և հանդիսանում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-5

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 58-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 53,4888 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ «ԷՅ ԹԻ ՓԻ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(ԶԵԿ. ԱՐԾՐՈՒՆ ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի , 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 38-րդ կետի «բ» ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով «ԷՅ ԹԻ ՓԻ» բարեգործական հիմնադրամի տնօրենի գրությունը՝ առաջարկվում է.

Համաձայնություն տալ՝

1. Գավառ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 53,4888 հա մակերեսով հողատարածքը անհատույց օգտագործման իրավունքով, 20 տարի ժամկետով տրամադրել «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամին՝ ծառատունկ իրականացնելու և անտառապատ տարածքներն ավելացնելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 59-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***«ԼԱՆՋԱՂԲՅՈՒՐ- ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(ԶԵԿ. ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի 1/ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 15/ կետի և 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով, նկատի ունենալով, որ «Գավառ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային հիմնարկի սպասարկման լիազորությունների մեջ են ներառվել վարչական բոլոր 11 բնակավայրերը

1. Լուծարել Լանջաղբյուր բնակավայրի «Լանջաղբյուր-Սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 60-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԾԱՌԵՐՆ ԱՐՄԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՀԱՆԵԼՈՒ ԵՎ ԱՅԼ ՎԱՅՐՈՒՄ ՎԵՐԱՏՆԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42/ կետի դրույթներով, նկատի ունենալով, որ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում գտնվող 432 տեղ հզորությամբ թիվ 5 հիմնական դպրոցի կառուցման» նախագծային աշխատանքների իրականացման ընթացքում պարզվել է, որ դպրոցի շինհրապարակի տարածքում առկա են շինարարական աշխատանքներին խոչընդոտող բազմամյա թվով 14 եղևնիներ ու 3 տուաներ: Հիմք ընդունելով շինարարական աշխատանքներն իրականացնող «Ֆ Տ Դ-ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրինության կողմից Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրած գրությունը, առաջարկվում է.

1.Համաձայնություն տալ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի թիվ 5 հիմնական դպրոցի շինարարական աշխատանքներն իրականացնող <<Ֆ Տ Դ - ՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից սեփական միջոցներով, համապատասխան մասնագիտացված տեխնիկայով դպրոցի շինհրապարակի տարածքում առկա շինարարական աշխատանքներին խոչընդոտող բազմամյա թվով 14 եղևնիներն ու 3 տուաները հանելուն և Գավառի համայնքապետարանի կողմից մատնանշած տարածքում վերատնկելու պայմանով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 61-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 09 ՄԱՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 39- Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)***

Ղեկավարվելով Հայաստանի հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ի մասի «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի և «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ առաջարկվում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Գավառ համայնքի ավագանու 09 մարտի 2022 թվականի N 39- Ա որոշումը:
2. Սահմանել Գավառ համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման կարգի չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 62-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ՝ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի և «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ առաջարկվում է.

1.Հաստատել Գավառ համայնքի համայնքային սոցիալական աջակցության քարտի տրամադրման կարճաժամկետ ծրագիրը /հավելված 1/:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 63-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ, ԽՈՑԵԼԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)***

Ղեկավարվելով Հայաստանի հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ի մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի և «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ առաջարկվում է.

Սահմանել Գավառի համայնքապետարանի աշխատակազմի կողմից սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված, խոցելի ընտանիքներին սոցիալական ծառայությունեների տրամադրման, սոցիալական աջակցության ծառայությունների բարելավման հետևյալ չափորոշիչները.
1. Գավառ համայնքում սոցիալական աջակցություն տրամադրող գործընթացն ապահովող ենթահանձնաժողովի կողմից կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին կամ ընտանիքին, հրատապ արձագանք պահանջող իրավիճակներում հայտնված անձանց կամ ընտանիքներին տրամադրվող աջակցության քարտի դրամական չափը սահմանել 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ, իսկ վկայագրի չափը 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ :
2. Սոցիալական աշխատողի և հանձնաժողովի երկու անդամի հատուկ եզրակացությամբ՝ անհետաձգելի բժշկական միջամտության, վիրահատությունների կամ հետազոտությունների, այլ բժշկական կենտրոն տեղափոխելու անհրաժեշտության, ինչպես նաև ուսման վարձի հատուցման չափը սահնմանել 40 000-ից /քառասուն հազար/ մինչև 200 000/երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:
3.Աղետի ռիսկի կանխագելման, բուժման կարիք ունեցող անձանց և այլ չնախատեսված դեպքերում դրամական հատուցման՝ ծառայության մատուցման չափը՝ քննարկում և հաստատում է համայնքի ավագանին:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 64-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1 հոդվածի 2-րդ մասի և 23 հոդվածի ,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24) կետի, 10-րդ հոդվածի 11-րդ մասի դրույթներով , հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 17.01.2025թ. արտահերթ նիստի թիվ 2-Ն որոշման պահանջները և Գավառ համայնքի աշխատակազմի գլխավոր մասնագետ, սոցիալական աշխատողի հատուկ եզրակացությունը առ 28.02. 2025 թ. ՝ առաջարկվում է.

1.Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ դրամական օգնություն տրամադրել

Գավառ քաղաքի Զարգարյան 27 տ 17 հասցեի բնակիչ Հովիկ Վաչիկի Սարգսյանին հոր՝ Վաչիկ Հակոբի Սարգսյանի հուղարկավորության/դագաղի/ ծախսերին հատուցելու նպատակով: Գումարը վճարել Հովիկ Վաչիկի Սարգսյանին :
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 65-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1 հոդվածի 2-րդ մասի և 23 հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24) կետի, 10-րդ հոդվածի 11-րդ մասի դրույթներով , հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 17.01.2025թ. արտահերթ նիստի թիվ 2-Ն որոշման պահանջները և Գավառ համայնքի աշխատակազմի գլխավոր մասնագետ, սոցիալական աշխատողի հատուկ եզրակացությունը 03.03.2025 թ.՝ առաջարկվում է.

1.Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ դրամական օգնություն տրամադրել ԼՂ-ից տեղահանված Գավառ քաղաքի Պետրոսյան փողոց, տուն 7 հասցեի բնակիչ Ջուլետա Մուրադի Բաբայանին ամուսնու ՝ Աշոտ Բորիկի Բաբայանի հուղարկավորության /դագաղի/ ծախսերը հատուցելու նպատակով: Գումարը վճարել Ջուլետա Մուրադի Բաբայանին :
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 66-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 7 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԱՂ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԻ ԿՐՏՍԵՐ ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲ ԲԱՑԵԼՈՒ ԵՎ «ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 7 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՀԱՍՄԻԿ ԵՍԱՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Պետական ոչ առևտրային

կազմակերպությունների մասին օրենք» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 08.04.2021 թ. թիվ 515 որոշման դրույթներով, հիմք ընդունելով համայնքի մսուր- մանկապարտեզի ծառայություններ մատուցելու անհրաժեշտությունը, *առաջարկվում է*

1. Հաստատել «Գավառի թիվ 7 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. «Գավառի թիվ 7 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը վերանվանել «Գավառի թիվ 7 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերության:
3. «Գավառի թիվ 7 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում բացել վաղ մանկության տարիքի կրտսեր առաջին խումբ՝ 2-3 տարեկանների ընդգրմամբ:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 67-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածով՝ առաջարկվում է.

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի երրորդ նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի թվականի ապրիլի 07-ը ժամը $14^{00}$-ն:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 68-Ա)*

Ավագանու անդամներ

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՀՐԱՅՐ ԳՈՒԼԱԲՅԱՆ

ԱՐՍԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳՆԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՕՆԻԿ ԴԱՆՈՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՆՈՒՆԵ ՄԻՐԻԲՅԱՆ

ԱՆԻ ՊԵՏՈՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱԴԱՄՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԻՐԻԲՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԲԱԴԱԼՅԱՆ

ՋԱՐՈՒՀԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՋԱԽԱՐՅԱՆ

ՆԱԻՐԱ ԽԱՆԴԱՆՅԱՆ

*ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ_____

*Նիստն արձանագրեց՝* Կարինե Մանուկյանը

_____